Հավելված N 3
ՀՀ կառավարության 2013 թվականի
հունիսի 6-ի N 598 - Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆԿՈՂՄԻՑ ՀՀ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՆՕՐԵՆԻՆ, ՄԵԹՈԴԻՍՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ**

**ՍՏՈՒԳԱԹԵՐԹ N _______ ____ _____________ 20__ թ.**

**ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**

_______________________________________ _______________
ստուգող մարմնի գտնվելու վայրը հեռախոսը

[ ][ ][ ][ ] _______________ ______________________________
Անձնական կոդը պաշտոնը ազգանունը, անունը, հայրանունը

[ ][ ][ ][ ] _______________ ______________________________
Անձնական կոդը պաշտոնը ազգանունը, անունը, հայրանունը

[ ][ ][ ][ ] _______________ ______________________________
Անձնական կոդը պաշտոնը ազգանունը, անունը, հայրանունը

Ստուգման սկիզբը ամսաթիվը՝ _______ _____________ 20___ թ., ավարտը՝ _______ _____________ 20___ թ.

_______________________________________________________
Ստուգվող սուբյեկտի անվանումը, իրավական տեսակը

_______________________________ ՀՎՀՀ [ ][ ][ ][ ][ ][ ][ ][ ]
Պետ. ռեգիստրի գրանցման համարը, ամսաթիվը

_______________________________________ _______________
Ստուգվող սուբյեկտի գտնվելու վայրը Հեռախոսը

_______________________________________ _______________
Ստուգվող սուբյեկտի ղեկավարի կամ վստահված անձի ազգանունը, անունը, հայրանունը Հեռախոսը

Ստուգման հանձնարարագրի համարը՝ __________ տրված՝ ______________________________ կողմից՝ ____ ____ 20__ թ.

Ստուգման նպատակը, ընդգրկված հարցերի համարները՝

_______________________________________________________
_______________________________________________________
_______________________________________________________
_______________________________________________________
_______________________________________________________
_______________________________________________________

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

| Հ. հ. | Հարց | Պատասխան |
|---|---|---|
| 1. | Ստուգվող սուբյեկտի կայքի, էլեկտրոնային փոստի հասցեները | |
| 2. | Իրականացվող կրթական ծրագրերը | |
| 3. | Համապատասխան լիցենզիաների առկայությունը | |
| 4. | Ուսումնական հաստատության կանոնադրության պետական գրանցման համարը, օրը, ամիսը, տարին | |
| 5. | Ուսուցման լեզուն | |
| 6. | Երեխաների թիվն ըստ տարիքի | |
| 7. | Երեխաների ընդհանուր թիվն ըստ հաստիքացուցակի | |
| 8. | Երեխաների ցուցակային թիվը | |
| 9. | Ավագ տարիքային խմբի երեխաների թիվը | |
| 10. | Երեխաների փաստացի թիվը ստուգման ընթացքում՝ ըստ հաշվառման մատյանների | |
| 11. | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թիվը | |
| 12. | Խորհրդակցական մարմինների առկայությունը, տեսակը | |
| 13. | Մանկավարժական խորհրդի կազմը | |
| 14. | Փաստացի աշխատողների թիվն ըստ տարիֆիկացիայի | |
| 15. | Հաստիքային միավորների թիվը | |
| 16. | Հաստիքային միավորների քանակը /դրույքաչափերը/՝ կախված խմբերի թվից | |
| 17. | Լրացուցիչ կրթական ծառայություններ մատուցող մանկավարժների թիվը | |
| 18. | Հատուկ մանկավարժների թիվը | |
| 19. | Սոցիալական մանկավարժների թիվը | |
| 20. | Հոգեբանների թիվը | |
| 21. | Պարուսույցների թիվը | |

# ՀԱՐՑԱՇԱՐ
## ՀՀ կրթության պետական տեսչության կողմից ՀՀ նախադպրոցական ծրագրեր իրականացնող կազմակերպությունում տնօրենին, մեթոդիստին ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումների

| N | Հարց | Հղում նորմատիվ իրավական ակտին* | Այո | Ոչ | Չ/Պ | Կշիռ | Ստուգման տեսակը | Մեկնաբանություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | տնօրենն ունի բարձրագույն կրթություն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս), վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի կամ մանկավարժական, գիտամանկավարժական աշխատանքի, կրթության կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ | ՆԿՄՕ հոդված 16, 22, հրամանի հավելվածի II մաս, 1-ին կետ, 1-ին ենթակետ | | | | 1 | փաստա-թղթային | |
| 2. | կրել է պատասխանատվություն կրթական ծրագրերի իրականացման համար, | ՆԿՄՕ հոդված 21, | | | | 0,5 | փաստա-թղթային | |
| 3. | համակարգել է կրթական գործընթացի կազմակերպման համապատասխան հաստատության ուսումնադաստիարակչական և վարչատնտեսական աշխատանքները: | Կանոնադրություն 30-րդ կետ, հրամանի հավելվածի II մաս, 1կետ, 2-րդ ենթակետ | | | | 0,5 | փաստա-թղթային | |
| 4. | որոշել է հաստատության գործունեության ռազմավարությունը, զարգացման նպատակներն ու խնդիրները, ընդունել որոշումներ այդ աշխատանքների ծրագրային պլանավորման համար | Կանոնադրություն 30-րդ կետ, հրամանի հավելվածի II մաս, 1կետ, 3-րդ ենթակետ | | | | 0,5 | փաստա-թղթային | |
| 5. | մշակել և իրականացնում է հաստատության զարգացման ծրագիրը, ուսումնական պլանները, տարեկան ուսումնական ժամանակացույցը, կանոնադրության պահանջները, ներքին կարգապահական կանոնները և աշխատակարգի կանոնները | ՆԿՄՕ հոդված 22 Կանոնադրություն կետ 37, հրամանի հավելվածի II մաս, 1կետ, 2-րդ ենթակետ, 3-րդ ենթակետ | | | | 1,5 | փաստա-թղթային | |
| 6. | լուծել է ուսումնամեթոդական, վարչական, ֆինանսական, տնտեսական հարցեր, պլանավորել, համակարգում և վերահսկում է հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների մանկավարժական և այլ աշխատողների գործունեությունը իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ դիտարկումներ, թեմատիկ, օպերատիվ ստուգումներ եւ գնահատում, տարեվերջյան հաշվետվություն | ՆԿՄՕ հոդված 22 օրինակելի կանոնադրություն 37-րդ կետ, հրամանի հավելվածի II մաս, 1կետ, 2-րդ ենթակետ, 3-րդ ենթակետ, 27 ենթակետ | | | | 1,5 | փաստա-թղթային | |
| 7. | հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը, կրթադաստիարակչական խմբերի համալրման, | ՆԿՄՕ հոդված 16 օրինակելի կանոնադրություն | | | | 1,5 | փաստա-թղթային | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | պարապմունքների ցանկը որոշվել են նախարարության մեթոդական ցուցումներին համապատասխան | կետ 20, Տնօրենի աշխատանքային փաթեթ | | | | | | |
| 8. | մանկավարժական կադրերի ընտրությունը, ընդունելությունը, աշխատողների պաշտոնային պարտականությունները, տեղաբաշխումը իրականացրել է սահմանված կարգով, ստեղծել է պայմաններ նրանց մասնագիտական վարպետության, որակավորման բարձրացման համար | ՆԿՄՕ հոդված 22,24 հրամանի հավելվածի II մաս, 1-ին կետ, 6-7-րդ ենթակետեր | | | | 1,5 | փաստա-թղթային | |
| 9. | ձևավորել է երեխաների համակազմը, ապահովել նրանց սոցիալական պաշտպանվածությունը, երեխաների ընդունման և ազատման հրամանների, շարժի մատյանը վարել է սահմանված կարգով | ՆԿՄՕ հոդված10, 23 շարժի մատյան | | | | 1,5 | փաստա-թղթային | |
| 10. | հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվել են նրանց միջև կնքված պայմանագրով | ՆԿՄՕ 28-րդ հոդված Կանոնադրություն կետ 25 հրամանի հավելվածի II մաս, 1-ին կետ, 9-10-րդ ենթակետեր | | | | 1 | փաստա-թղթային | |
| 11. | երեխաների անձնական գործերն առկա են | ՆԿՄՕ 28-րդ հոդված | | | | 0,5 | փաստա-թղթային | |
| 12. | երեխաների անձնական գործերն ամբողջական են /ծնողի դիմում, պայմանագիր/ | Կանոնադրություն կետ 25 | | | | 0,5 | փաստա-թղթային | |
| 13. | սահմանել է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները, 12.1 նախագահել է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը, վարել է նիստերի արձանագրությունների մատյանը | ՆԿՄՕ հոդված 22, Կանոնադրություն կետ 37 | | | | 1 | փաստա-թղթային | |
| 14. | ապահովել է ուսումնանյութական բազայի պահպանման, համալրման հաշվառումը, սանիտարահիգիենիկ ռեժիմի, աշխատանքի պաշտպանության փաստաթղթերի պահպանությունը | Կանոնադրություն կետ 37, հրամանի հավելվածի II մաս, 1-ին կետ, 14 ենթակետ | | | | 1 | փաստա-թղթային | |
| 15. | ՀՀ օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու (հիմնադրի), որոշումներով և կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինել է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները | ՆԿՄՕ հոդված 22 Կանոնադրություն կետ 37 հրամանի հավելվածի II մաս, 1-ին կետ, 20 ենթակետ | | | | 1 | փաստա-թղթային | |
| 16. | աշխատանքի նշանակել և աշխատանքից ազատել է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառել է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր սահմանված կարգով | ՆԿՄՕ հոդված 22, Կանոնադրություն կետ 37, հրամանի հավելվածի II մաս, 1-ին կետ, 22-րդ ենթակետ | | | | 1,5 | փաստա-թղթային | |
| 17. | իրականացրել է մանկավարժական կադրերի և սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծել նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար իրականացրել է ղեկավար եւ մանկավարժական կադրերի վերապատրաստման գործընթացը | ՆԿՄՕ հոդված 22, 25, Կանոնադրություն կետ 37, հրամանի հավելվածի II մաս, 1-ին կետ, 26-րդ ենթակետ | | | | 1,5 | փաստա-թղթային | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 18. | հաստատության մանկավարժների, ղեկավարների ատեստավորումն իրականացվել է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից | ՆԿՄՕ հոդված 25 | | | | 0,5 | փաստա-թղթային | |
| 19. | կազմել է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացրել կառավարման մարմինների հաստատմանը | ՆԿՄՕ հոդված 11, 22, Կանոնադրություն կետ 37, հրամանի հավելվածի II մաս, 1-ին կետ, 26-րդ ենթակետ | | | | 1 | փաստա-թղթային | |
| 20. | հաստատության հաստիքացուցակը կազմված է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հաստատած օրինակելի հաստիքացուցակի և նորմատիվների հիման վրա | ՆԿՄՕ 30-րդ հոդվածի 6-րդ կետ | | | | 1 | փաստա-թղթային | |
| 21. | ոչ պետական նախադպրոցական ուսումնական հաստատության հաստիքացուցակը հաստատված է իրենց կանոնադրությամբ սահմանված կարգով | ՆԿՄՕ 30-րդ հոդվածի 7-րդ կետ | | | | 1 | փաստա-թղթային | |
| 22. | նախադպրոցական ուսումնական հաստատությունն ունի ՀՀ կառավարության հաստատած օրինակելի կանոնադրության հիման վրա հիմնադրի (հիմնադիրների) հաստատած կանոնադրություն*/կցել ձևը/ | ԿՄՕ Հոդված 31, 32, ՆԿՄՕ 13-րդ հոդվածի 4-րդ մաս, Կանոնադրություն 1-2-րդ կետեր | | | | 2 | փաստա-թղթային | |
| 23. | հաստատության գտնվելու վայրը համապատասխանում է կանոնադրության մեջ ամրագրված իրավաբանական հասցեին | ԿՄՕ Հոդված 31, 32, Կանոնադրություն 3-րդ կետ | | | | 1 | փաստա-թղթային | |
| 24. | հաստատությունն ունի ՀՀ զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, խորհրդանիշ, իր անվանմամբ ձևաթղթեր և այլ անհատականացման միջոցներ | ԿՄՕ Հոդված 31, 32, Կանոնադրություն 5-րդ կետ | | | | 1 | փաստա-թղթային | |
| 25. | հաստատություն են ընդունվել մինչեւ 6 տարեկան երեխաները | ԿՄՕ Հոդված 15, 1, 2, 3 կետեր, ՆԿՄՕ 2-րդ հոդվածի 2-րդ մաս, 9-րդ հոդված 2-րդ մաս, Կանոնադրություն 14-րդ, 17-րդ կետեր | | | | 1 | փաստա-թղթային | |
| 26. | խմբերը համալրված են ըստ նախադպրոցական տարիքային փուլերի՝ | ԿՄՕ Հոդված 15, ՆԿՄՕ 2-րդ հոդվածի 2-րդ մաս, 9-րդ հոդված 2-րդ մաս, Կանոնադրություն 14, 16 , 17 կետեր | | | | 1 | փաստա-թղթային | |
| 27. | վաղ տարիքային խմբում ընդգրկված են մինչև 3 տարեկան երեխաները. | ԿՄՕ Հոդված 15, ՆԿՄՕ 2-րդ հոդվածի 2-րդ մաս, 9-րդ հոդված 2-րդ մաս, նորմատիվներ, Կանոնադրություն 14, 16 , 17 | | | | 1 | փաստա-թղթային | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | կետեր | | | | | | |
| 28. | կրտսեր նախադպրոցական խմբում ընդգրկված են 3-ից մինչև 5 տարեկան երեխաները. | ԿՄՕ Հոդված 15, ՆԿՄՕ 2-րդ հոդվածի 2-րդ մաս, 9-րդ հոդված 2-րդ մաս, նորմատիվներ, Կանոնադրություն 14, 16 , 17 կետեր | | | | 1 | փաստա-թղթային | |
| 29. | ավագ նախադպրոցական խմբում ընդգրկված են 5-ից մինչև 6 տարեկան երեխաները | ԿՄՕ Հոդված 15, ՆԿՄՕ 2-րդ հոդվածի 2-րդ մաս, նորմատիվներ, 9-րդ հոդված 2-րդ մաս, Կանոնադրություն 14, 16 , 17 կետեր | | | | 1 | փաստա-թղթային | |
| 30. | խմբերի խտությունը համապատասխանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմատիվներին մինչև 1 տարեկան՝ 10-15, 1-ից 3 տարեկան՝ 15-20, 3-ից 6 տարեկան՝ 25-30 | ՀՆԿՄՕ 10-րդ հոդվածի 1, 2-րդ կետեր, Կանոնադրություն կետ 16, նորմատիվներ | | | | 1 | փաստա-թղթային | |
| 31. | հաստատությունում չեն գործում քաղաքական և կրոնական կազմակերպություններ | ՆԿՄՕ 5-րդ հոդվածի <<ե>> կետ, կանոնադրություն կետ 8-րդ | | | | 0,5 | Ուսումնաս. | |
| 32. | նախադպրոցական կրթությունն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հաստատած նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան կրթական ծրագրերով | ԿՄՕ Հոդված 3-ի 3-րդ,4-րդ,5-րդ կետեր, ՆԿՄՕ 21-րդ հոդված, 2-րդ կետ | | | | 2 | փաստա-թղթային | |
| 33. | նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով չնախատեսված լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցումն իրականացվում է ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների համաձայնությամբ և ընտրությամբ | ԿՄՕ Հոդված 10-ի 5-րդ կետ Հոդված 12, Հոդված 26-ի 1-ին, 2-րդ կետեր, ՆԿՄՕ 2-րդ հոդվածի 1-ին մաս, 21-րդ հոդվածի 3-րդ կետ | | | | 1 | փաստա-թղթային | |
| 34. | հաստատությունն ունի լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցման ծրագիր, ծրագրային նյութեր եւ աշխատանքային պլան | ԿՄՕ հոդված 10-ի 5-րդ կետ հոդված 12, Հոդված 26-ի 1-ին 2-րդ կետեր, ՆԿՄՕ 2-րդ հոդվածի 1-ին մաս, 21-րդ հոդված, 3-րդ կետ | | | | 1 | փաստա-թղթային | |
| 35. | հաստատությունը մշակում և, նախարարության հետ համաձայնեցնելով, իրականացնում է նաև նախադպրոցական կրթության հեղինակային ծրագրեր | Կանոնադրություն կետ 18 | | | | 0,5 | փաստա-թղթային | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 36. | հաստատությունն իրականացնում է մանկավարժական նորարարական, այլընտրանքային ծրագիր, փորձարարական գործունեություն | ՆԿՄՕ 11-րդ հոդվածի 3-րդ մաս | | | | 0,5 | փաստա-թղթային | |
| 37. | հաստատության սաներն ապահովված են անվճար հիմունքներով անընդհատ բժշկական սպասարկմամբ | ՆԿՄՕ 26-րդ հոդվածի 2-րդ մաս | | | | 1 | փաստա-թղթային | |
| 38. | հաստատությունում, սահմանված չափաքանակին համապատասխան, երեխաների սնունդը կազմակերպում և դրա համար պատասխանատվություն են կրում ուսումնական հաստատության հիմնադիրը՝ | ՆԿՄՕ հոդված 23, 26, 27 | | | | 1 | փաստա-թղթային | |
| 39. | հաստատության երեխաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում երեխաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար | ՆԿՄՕ 26-րդ հոդված, Կանոնադրություն կետ 20,21 հրամանի հավելված 18 | | | | 1 | փաստա-թղթային | |
| 40. | երեխաների զարգացման, դաստիարակության, ուսուցման եւ առողջության ամրապնդման համար ապահովված են սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան պայմաններ | ՆԿՄՕ 11-րդ հոդվածի 1-ին մասի <<գ>> կետ, կանոններ | | | | 1 | փաստա-թղթային | |
| 41. | **մեթոդիստն** (**տնօրենի ուսումնական գծով տեղակալը**)՝ ունի բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կրթություն և վերջին յոթ տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի կամ մանկավարժական աշխատանքի առնվազն 5 տարվա մանկավարժական աշխատանքային ստաժ | ՆԿՄՕ հոդված 18, 20, 22, կանոնադրություն կետ 39, հրամանի հավելվածի III մաս, 3-րդ կետ, 1-ին ենթակետ | | | | 1 | փաստա-թղթային | |
| 42. | մեթոդիստը կազմակերպել է ուսումնամեթոդական փաստաթղթերի, ձեռնարկների, ուսումնական առարկաների, սարքավորումների և դիդակտիկ նյութերի տիպային ցանկից բխող նյութերի համակարգման աշխատանքները, | ՆԿՄՕ հոդված 11, 20, 22 կանոնադրություն կետ 39, հրամանի հավելվածի III մաս, 4-րդ ենթակետ ծրագիր | | | | 1 | փաստա-թղթային | |
| 43. | մեթոդիստը ապահովել և վերահսկել է տիպային ծրագրի դրույթների և մեթոդական հանձնարարականների կատարումը | ՆԿՄՕ հոդված 20, 22, կանոնադրություն կետ 39, ՆԿՄՕ հոդված 20, 22, կանոնադրություն կետ 39, հրամանի հավելվածի III մաս, 5 ,6, 7, 8 ենթակետեր | | | | 1,5 | փաստա-թղթային | |
| 44. | մեթոդիստը պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար. դաստիարակների համար անցկացրել է բաց պարապմունքներ, | ՆԿՄՕ հոդված 11, 20, 22, կանոնադրություն կետ 39, հրամանի հավելվածի III մաս, | | | | 1,5 | փաստա-թղթային | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | սեմինարներ, անհատական և խմբային խորհրդատվություններ (կոնսուլտացիաներ), ստուգատեսներ, ցուցահանդեսներ | 5, 6, 7, 15-րդ ենթակետեր | | | | | | |
| 45. | մեթոդիստը ուսումնական հաստատությունների, ստորաբաժանումների, ուսումնամեթոդական, մեթոդական կաբինետների, կենտրոնների ղեկավարներին և մանկավարժական աշխատողներին խորհրդատվական և գործնական օգնություն է ցույց տվել ուսումնական, մեթոդական և դաստիարակչական աշխատանքներ կազմակերպելու համար. | ՆԿՄՕ հոդված 11, 22, կանոնադրություն կետ 39, հրամանի հավելվածի III մաս, 8,9-րդ ենթակետեր | | | | 1 | փաստա-թղթային | |
| 46. | մեթոդիստը պլանավորել է ուսումնադաստիարակչական, մեթոդական աշխատանքները հաստատությունում՝ հաշվի առնելով մանկավարժական կադրերի կարողությունները, փորձը. այդ թվում՝<br>ա. դաստիարակների մասնագիտական որակավորման բ. պարապմունքների բաշխման գրաֆիկը՝ ըստ տարիքային խմբերի դ. դաստիարակներին մեթոդական օգնության կազմակերպումը<br>ե. պարապմունքների նախապատրաստման և անցկացման գործում<br>զ. մանկապարտեզի և դպրոցի կապը, հաջորդականությունը<br>է. մանկավարժական կադրերի ատեստացիան<br>ը. խմբերի համալրումը ուսումնական պարագաներով, խաղերով, խաղալիքներով | ՆԿՄՕ հոդված 11, 22, 25, կանոնադրություն կետ 39, հրամանի հավելվածի III մաս, 12-րդ ենթակետ | | | | 1 | փաստա-թղթային | |
| 47. | մեթոդիստը իրականացրել է դաստիարակների աշխատանքի նկատմամբ վերահսկողություն. սիստեմատիկ ստուգում է՝<br>ա. ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանները.<br>բ. մեթոդական աշխատանքը մանկապարտեզում, մանկավարժների ինքնակրթությունը.<br>գ. մեթոդական աշխատանքի բովանդակությունը. նախապատրաստումը, ծրագրավորումը, պլանավորումը, կազմակերպումն ու կարգավորումը խթանումը, վերլուծությունը, իրականցնում է սեմինարներ, անհատական և խմբային խորհրդատվություններ (կոնսուլտացիաներ), ստուգատեսներ, ցուցահանդեսներ | կանոնադրություն կետ 39, հրամանի հավելվածի III մաս, 22-րդ ենթակետ | | | | 1 | փաստա-թղթային | |
| 48. | մեթոդիստը կազմակերպել է աշխատանք ծնողների շրջանում, խմբային, անհատական, թեմատիկ ժողովներ, պատրաստել է ծնողների հետ տարվող աշխատանքների համար վահանակներ, շարժական թղթապանակներ ընտանեկան դաստիարակության փորձի վերաբերյալ | ՆԿՄՕ հոդված 22.23, կանոնադրություն կետ 39, հրամանի հավելվածի III մաս, 19-րդ ենթակետ | | | | 1 | փաստա-թղթային | |

Հարցաշարում «Այո», «Ոչ» և «Չ/պ» պատասխանների նշանակությունը

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | «Այո»՝ առկա է, համապատասխանում է, բավարարում է | V | | |
| 2. | «Ոչ»՝ ոչ, առկա չէ, չի համապատասխանում, չի բավարարում | | V | |
| 3. | «Չ/Պ»՝ չի պահանջվում | | | V |

**Ստուգաթերթը կազմվել է հետևյալ իրավական ակտերի հիման վրա՝**

1. «Կրթության մասին» ՀՀ օրենք (**ԿՄՕ**)
2. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք (**ՆԿՄՕ**)
3. «Լեզվի մասին» ՀՀ օրենք
4. ՀՀ կառավարության 2002թ. դեկտեմբերի 26-ի N 54 արձանագրային որոշում <<Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությանը հավանություն տալու մասին (**կանոնադրություն**)
5. ՀՀ ԿԳ նախարարի 2011թ. ապրիլի 26-ի «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆաորակավորման կազմի բնութագրերի ըստ պաշտոնների» N416-Ն **հրամանի հավելված**
6. ՀՀ ԿԳ նախարարի 2007թ. հունվարի 26-ի N 29-Ն հրամանով հաստատված «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» (**նորմատիվներ)**
7. ՀՀ ԿԳ նախարարի 2011թ. հուլիսի 28-ի «Նախադպրոցական ուսումնական հաստատության երեխաների շարժի մատյան ձևաթուղթը, գործածության և վարման կարգը հաստատելու մասին» N 870 հրաման (**շարժի մատյան**)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ